

**Արա Աբրամյանի ելույթը “Հանուն համազգային միասնության շարժման”
մարզային կառույցների ներկայացուցչական
հավաքի ժամանակ /08.07.2016/**

**Հարգելի հայրենակիցներ,
Տիկնայք և պարոնայք**

Ընթացիկ հարյուրամյակը նոր մարտահրավերներ է ներկայացնում մեր մոլորակի բնակչությանը: Աշխարհում տեղի ունեցող բուռն տեղաշարժերն ու զարգացումներն արդեն շոշափում են նաև Հայաստանի, Արցախի և համայն հայության շահերը: Դրա վառ վկայությունն է այն փաստը, որ այսօր Ղարաբաղի անկախության ճանաչման խնդիրը հայտնվել է տեղի ունեցող գլոբալ բախումների կիզակետում:

Մենք չենք կարող անտարբեր մնալ 21-րդ դարի թելադրած մարտահրավերների հանդեպ: Մենք չենք կարող հանգիստ նստել ու սպասել, թե ի՞նչ տեղի կունենա և ի՞նչ է սպասվում մեզ: Ընթացիկ հարյուրամյակն իր դաժան մարտահրավերներով նման անհոգության տեղ չի թողնում: Համազգային միասնությամբ մենք կարող ենք դիմակայել այդ մարտահրավերներին: Նշվածը փաստերով ամրապնդելու համար ձեր ուշադրությունը կհրավիրեմ ընդամենը երկու իրադարձության վրա:

Հայաստանի Հանրապետության նախագահ Մերժ Սարգսյանի ղեկավարությամբ Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների համակարգման պետական հանձնաժողովի կողմից կազմակերպված միջոցառումների անցկացումը ցույց տվեցին, որ մենք ազգային համախմբվածության և միասնության ապահովման միջոցով ի վիճակի ենք լուծելու Հայաստանի տնտեսական վերելքի, երկրի անվտանգության ապահովման, Արցախի անկախության ճանաչման, ինչպես նաև համազգային նշանակություն ունեցող ցանկացած հիմնախնդիր:

Մյուս իրադարձությունը դա Արցախյան քառօրյա պատերազմն էր, որի ժամանակ ամբողջ հայ ժողովուրդը՝ Հայաստանում, Արցախում և սփյուռքում համախմբվեց և ապրում էր Արցախյան ռազմաճակատով:

Այո, նշված և բազմաթիվ այլ իրադարձություններ վկայում են, որ մեր ժողովրդի միասնությունը, համախմբումը նրա պատմական հաջողությունների և հաղթանակների աղբյուրն է ու գրավականը:

Ահա թե ինչու Համաշխարհային հայկական կոնգրեսը և Ռուսաստանի հայերի միությունը, համոզված լինելով, որ աշխարհաքաղաքական բուռն

գարգացում ապրող իրադարձությունները դեռ շատ փորձություններ կարող են մատուցել, նախաձեռնեցին **“Հանուն համազգային միասնության շարժումը”**, որն արդեն կյանքի ուղեգիր է ստացել և ձեռք բերել իր համախոհներին: Հայաստանում արդեն ձևավորվել են շարժման մարզային և քաղաքային կառույցները, որոնք հետևողական աշխատանք են տանում համախոհների հավաքագրման ուղությամբ: Այսօր այս դահլիճում հավաքվել են Շարժման տարածքային կառույցի ղեկավարները, պատասխանատուները, որոնք շատ ավելի լավ գիտեն տեղերում գործերի վիճակի, հաջողությունների, բացթողումների ու թերությունների մասին: Ես համոզված եմ, որ դուք հավատում եք դրական վերափոխումների գաղափարին և կփորձեք ձեր ներդրումն ունենալ այդ գործում:

Այսօր հայ ժողովրդի երեք հատվածները՝ Հայաստանը, Արցախը և սփյուռքը հայտնվել են շահերի նույն հարթության վրա: Հենց այդ իրողությունից էլ բխում է մեր շարժման **գլխավոր նպատակը՝ նպաստել համազգային շահերի շուրջ համայն հայության համախմբմանը՝ ի շահ 21-րդ դարի մարտահրավերների դիմակայման:**

Ժամանակակից աշխարհում համազգային միասնության ապահովման շարժիչ ուժ կարող է հաղիսանալ Հայաստանի Հանրապետությունը: Պարզ է, որ իր այդ կարևոր պատմական առաքելությունն իրագործելու համար Հայաստանը պետք է լինի տնտեսապես և սոցիալապես հզոր, համախմբված:

Ցավոք սրտի Հայաստանը հզորանալու համար դեռևս լուրջ ճանապարհ ունի անցնելու: Հանրահայտ փաստ է, որ Հայաստանի տնտեսության զարգացման վիճակը բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների հետևանքով շատ հեռու են բավարար լինելուց: Զգալի բացթողումներ կան Հայաստանի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման, բնակչության սոցիալական պաշտպանվածության բնագավառներում: Գործազրկության, աղքատության, երկրում տիրող անարդարության մթնոլորտի և այդ ամենի հետևանք հանդիսացող արտագաղթի նվազեցման ուղությամբ ձեռնարկված միջոցները դեռևս արդյունավետ չեն:

Հայաստանի քաղաքական, տնտեսական և բանակաշինության համակարգում լուրջ տեղ է զբաղեցնում կոռուպցիան: Կոռուպցիոն երևույթներն ավելի ցայտուն դարձան հատկապես ապրիլյան պատերազմից հետո: Իշխանությունները պետք է քաղաքական կամք դրսևորեն նման արատավոր երևույթների դեմ պայքարի գործում: Հայաստանի կառավարությունը վերջերս սկսել է պայքարը կոռուպցիայի դեմ: Մնում է հուսալ, որ այդ պայքարն արդյունավետ վերջաբան կունենա:

Երկրում դեռևս առկա են ունեցվածքային և սոցիալական կարգավիճակների խիստ շերտավորում: Հանրային հոգեբանության մեջ սոցիալական նման բարդ իրավիճակի արդյունքում ձևավորված երևույթները խաթարում են Հայաստանում սոցիալական համերաշխության ձևավորումը: Ստեղծված իրավիճակով պետք է բացատրել այն փաստը, որ երկրում տիրում է քաղաքացիների վստահության ընդհանուր ճգնաժամ՝ քաղաքական համակարգի նկատմամբ: Այդ երևույթն ավելի ցայտուն է արտահայտված երիտասարդության միջավայրում: Եվ դա ունի իր դրդապատճառները: Ըստ մի շարք հետազոտությունների արդյունքների երիտասարդությունը Հայաստանում հանդիսանում է ավելի խոցելի խավերից մեկը: Նրանց միջավայրում խիստ բարձր է գործազրկության մակարդակը: Ըստ ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի շրջանակում պատրաստված “Երիտասարդության զբաղվածությունը Հայաստանում” զեկույցի տվյալների գործազրկությունը երիտասարդության շրջանում կազմում է 40%: Ահա թե ինչու երիտասարդությունը չի զգում պետության հոգատարությունն իր շահերի և իրավունքների պաշտպանության գործում:

Հայաստանի աշխատաշուկայում տիրող իրավիճակով է հիմնականում պայմանավորված **բնակչության և հատկապես երիտասարդության միգրացիոն տրամադրությունները:** Դժբախտաբար այդ մտահոգություններն ոչ միայն չեն մեղմանում, այլ գնալով ավելի են սրվում:

Մեկ այլ կազմակերպության կողմից կազմակերպված հետազոտությունների արդյունքում երկրում մնալ/գնալու վերաբերյալ հարցումների պատասխաններն ինդեքսավորվել են հաշվի առնելով, իհարկե, նաև արտագաղթածներին: Ինդեքսավորման արդյունքում ստացվում է, որ մեկ մնացողին հասնում է երկու գնացող, իսկ երիտասարդների շրջանում մեկ մնացողին՝ երեք գնացող:

Բոլոր տեսակի հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանում խիստ բարելավման կարիք ունի պետական երիտասարդական քաղաքականությունը, որը չի համապատասխանում ներկա պայմաններում երիտասարդությանը հուզող հարցադրումներին:

Եթե այսօր “Հանուն համազգային միասնության” շարժման նպատակների համատեքստում քննարկենք վերը հիշատակված և գոյություն ունեցող բազմաթիվ պրոբլեմները, ապա պետք է նշել, որ ներկա իրավիճակում համայն հայության բացառիկ գերակայություն ունեցող խնդիրն անկախ Հայաստանի և հայոց պետականության պահպանումն ու

ամրապնդումն է, նրա անվտանգության ապահովումը: Տնտեսապես, սոցիալապես հզոր Հայաստանն է այն վահանը, որ կարող է պաշտպանել հայ ժողովրդին դարի մարտահրավերներից: Նման Հայաստան կերտելու գործում իհարկե շատ անելիքներ ունեն առաջին հերթին Հայաստանի իշխանությունները, որոնք պետք է պոզիտիվ վերափոխումներ ձեռնարկեն երկրի քաղաքական համակարգում, սոցիալ-տնտեսական զարգացման, բնակչության սոցիալական պաշտպանվածության գործընթացներում:

Հանուն համազգային միասնության շարժումը գտնում է, որ Հայաստանի հզորացումը միայն հայաստանցիների խնդիրը չէ: Միանգամայն ճիշտ է ասված, որ ժամանակակից Հայաստանը սփյուռքի հետ և առանց սփյուռքի՝ երկու տարբեր քառային կատեգորիաներ են: Ժամանակակից Հայաստանի զարգացումը շատ հարցերում կախված է սփյուռքի հետ արդյունավետ համագործակցությունից:

Հայաստանի և սփյուռքի գործարար շրջանների երկխոսության համար արդյունավետ ինստիտուտ կարող է դառնալ “Հանուն համազգային միասնության շարժումը”: Ուստի շարժման առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է դառնա սփյուռքի հայկական համայնքների, գործարար շրջանների ներուժի համախմբումը, հայրենիքին որակական օգնություն ցույց տալու և համազգային խնդիրների լուծման գործում:

Հայկական սփյուռքի մտավոր, տնտեսական ու ֆինանսական ներուժը, բիզնեսի կազմակերպման փորձն՝ աշխարհի առաջատար երկրներում և համաշխարհային շուկայում պետք է դիտարկվեն որպես Հայաստանի և Արցախի տնտեսության կարևորագույն դաշնակից:

Համազգային շարժումը և Համաշխարհային հայկական կոնգրեսը, Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարության և մյուս նախարարությունների հետ համատեղ կարող են արդյունավետ գործընկեր դառնալ Հայաստանի տնտեսական զարգացման ու համաշխարհային շուկայում հայկական բիզնեսի աջակցության համալիր ծրագրի մշակման ու իրականացման գործում: Նման մոտեցումը կնպաստի համահայկական հավաքական ներուժի ձևավորմանը, ինչը թույլ կտա հայ ժողովրդին ամրապնդելու իր դիրքերն աշխարհում:

Գտնում ենք, որ Հայաստանի զարգացման խնդիրները կարող են իրականություն դառնալ ռազմավարական բնույթի ներդրումային ծրագրերի իրականացմամբ, որոնք ուղղված կլինեն Հայաստանի տնտեսությունում գիտատար, պաշտպանական նշանակության արդյունաբերական ճյուղերի ստեղծմանն ու զարգացմանը: Ռազմավարական բնույթի ներդրումները

հնարավորություն կտան ձևավորել տնտեսական զարգացման շարժիչներ և դուրս գալով միջազգային տնտեսական հարթակ՝ փոխել Հայաստանի տնտեսության մեջ տեղ գտած անբարենպաստ վիճակը:

Գտնում ենք, որ Հայաստանի աշխատաշուկայի վիճակը բարելավելու համար անհրաժեշտ է լուրջ տեղ հատկացնել հատկապես փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, որն առաջատար երկրներում ապահովում է բնակչության զբաղվածության 70%:

Նշված խնդիրների լուծմանը նպաստեու համար լուրջ քայլեր են ձեռնարկել Համաաշխարհային հայկական կոնգրեսն ու Ռուսաստանի հայերի միությունը: Արդեն մի քանի ամիս է, ինչ համազգային միասնության շարժման շրջանակներում, նախապատրաստվում է և ընթացիկ տարվա հոկտեմբերի 14-ից 16-ը Երևանում կանցկացվի **Եվրասիական տարածքային տնտեսական առաջին ֆորումը**: Այդ ֆորումը ոչ թե եզակի բնույթ է կրելու, այլ դառնալու է մշտական գործող հարթակ և անց է կացվելու տարին մեկ անգամ՝ Երևանում:

Ես այսօր նպատակ չեմ հետապնդում մանրամասն ներկայացնել ֆորումի ծրագիրը, քանզի այդ մասին լուրջ խոսակցություն կբացվի հոկտեմբերին՝ ֆորումի ժամանակ: Սակայն կցանկանայի ձեր ուշադրությունը հրավիրել ֆորումի կազմակերպիչների, գործընկերների, ֆորումի նպատակների ու խնդիրների վրա:

Ֆորումը կազմակերպվում է Համաաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության կողմից, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և ՀՀ կառավարության հետ միասին: Ֆորումին կմասնակցեն Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների, ինչպես նաև Միացյալ Նահանգների, Չինաստանի, Հարավային Կորեայի, Հնդկաստանի, Իրանի, Վրաստանի, Ֆրանսիայի, Միացյալ Թագավորության, Գերմանիայի, Իտալիայի կառավարությունների և բիզնես հանրության բարձաստիճան ներկայացուցիչներ:

Քառօրյա միջոցառումը չորս առաջնային նպատակ է հետապնդում, դրանք են՝

- Իրազեկում՝ Եվրասիական Տնտեսական Միության տնտեսական ներուժի մասին;
- Ազգային և տարածաշրջանային ներդրումային և խոշոր բիզնես հնարավորությունների բացահայտում;

- Իր տեսակի մեջ եզակի ինովացիոն գաղափարների և ծրագրերի ներկայացման տարածաշրջանային նորարարական հարթակի ձևավորում;
- Երկկողմ և բազմակողմանի հիմնարար կապերի հաստատում հավանական բիզնես գործընկերների միջև:

Տորումի առաքելությունն է՝ ստեղծել մշտական հաղորդակցության քննարկման և իրական ժամանակում համագործակցության մի հարթակ, որը կնպաստի **Եվրասիական Տնտեսական Միության անցմանը՝ “Խելամիտ կառավարվող տարածաշրջանի”:**

Համոզված եմ, որ ֆորումն արդյունավետ դեր կարող է խաղալ Հայաստանում ներդրումային քաղաքականության բարելավման, նոր աշխատատեղերի ստեղծման, գործազրկության, աղքատության և արտագաղթի կործանարար հետևանքներից պետության հոգսերը թեթևացնելու գործում: Մնում է, որ Հայաստանի իշխանություններն անհրաժեշտ հետևողականություն ցուցաբերեն Հայաստանում ներդրումային և գործարարական միջավայրը գրավիչ դարձնելու գործում:

Տորումի նախապատրաստման և անցկացման գործում լուրջ խնդիրներ ունեն նաև Ազգային միասնություն շարժման մարզային և քաղաքային կառույցները: Այդ կառույցներում արդեն քննարկվել են ֆորումի կազմակերպման հետ առնչվող խնդիրները: Սակայն մի հարցի վրա ևս կցանկանայի հրավիրել ձեր ուշադրությունը: Երբ խոսում ենք ներդրումային քաղաքականության, բիզնես ծրագրերի մասին, չպետք է ի նկատի ունենալ միայն ծավալուն, հանրապետական նշանակություն ունեցող ծրագրերը: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում վճռորոշ դեր կարող են խաղալ տեղական՝ մարզային, համայնքային բիզնես-ծրագրերը, որոնց շնորհիվ ևս կստեղծվեն անհրաժեշտ աշխատատեղեր: Տեղական ծրագրերի նշանակությունը կարևոր է նաև այն իմաստով, որ դրանց իրականացման գործում մենք կարող ենք ներգրավել տվյալ տարածաշրջանում ծնված և կրթություն ստացած, ներկայումս Ռուսաստանում և այլ երկրներում բիզնես գործունեությամբ զբաղվող գործարարներին: Նրանք կարող են համապատասխան ներդրում անել իրենց փոքր հայրենիքում, փող աշխատել և նպաստել այդ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Այդ գործի կազմակերպումն իր վրա կարող է վերցնել Ռուսաստանի հայերի միությունը:

Հարգելի հայրենակիցներ

Շարժումն այսօր Հայաստանի և Արցախի տնտեսական զարգացման և անվտանգության խնդիրը դիտարկում է արմատական փոխադարձ կապակցվածության և փոխալայմանավորվածության մեջ: Երկարատև և կայուն անվտանգության ապահովումը հնարավոր է միայն զարգացման առաջընթաց տեմպերի ապահովման դեպքում: Իսկ երկարաժամկետ զարգացման գործընթացը միանշանակ պահանջում է մեր ազգի համար անվտանգության բավարար պայմանների ստեղծում՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում:

Ուստի, ներկայումս համազգային գլխավոր խնդիրներից մեկն է դառնում Հայաստանի, Արցախի և սփյուռքի անվտանգության ամրապնդման հարցերը: Ներկա կոնֆլիկտային աշխարհում գոյություն ունեցող բախումներն ոչ մի սահման չեն ճանաչում: Ստեղծված իրավիճակում օբյեկտիվ անհրաժեշտություն է դառնում եռամակարդակ ազգային անվտանգության հայեցակազմի մշակումը, որով պետք է զբաղվեն թե՛ ՀՀ իշխանությունները, թե՛ Համազգային շարժումը՝ սփյուռքյան հասարակական և քաղաքական կազմակերպությունների հետ: Նման հայեցակարգի մշակումն իհարկե երկար ժամանակ է պահանջում: Ներկայումս Հայաստանի և Արցախի անվտանգության խնդիրը պետք է դիտարկենք ապրիլյան չորսօրյա պատերազմի դասերի ներքո: Ուստի Հայաստանի և Արցախի իշխանությունները պետք է լուրջ կերպով զբաղվեն բանակաշինության հարցերի ամբողջ կոմպլեքսով՝ սկսած հայ զինվորի հետ տարվող աշխատանքից մինչև զենքի և մյուս անհրաժեշտ միջոցների մատակարարումը:

Հատկապես շատ կարևոր է Հայաստանի և Արցախի անվտանգության Խնդիրը: Այստեղ է, որ մենք դեռևս ունենք շատ անելիքներ ու չլուծված հարցեր: Ապրիլյան դեպքերի առթիվ մեր ժողովուրդը համախմվեց և այդ հավաքական ոգևորությունը իրոք հպարտանալու առիթ է տալիս: Բայց օրինական հարց է ծագում, չէ որ մենք բոլորս, թե Հայաստանում, թե սփյուռքում, գիտեինք, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև ընդամենը զինադադարի պայմանագիր է կնքված, այլ ոչ թե հաշտության:

Մեզ հայտնի էին նաև Ադրբեջանի նախագահի ազրեսիվ, ռազմատենչ հայտարարությունները Ղարաբաղը և մյուս տարածքները զենքով վերադարձնելու մասին: Ավելին, ամեն օր վիճակագրական տվյալներ էին հրապարակվում Ադրբեջանի կողմից Արցախի և Հայաստանի ուղղությամբ կրակոցներ արձակելու, այդ թվում նաև զոհերի մասին: Այդ բոլորն իմանալով

հանդերձ մենք պետք է համազգային համախմբում **դրսևորեինք յուրաքանչյուր օր**, որպեսզի խուսափեինք պատերազմից:

Պետք է մեր ամենօրյա աշխատանքի միջոցով ցույց տայինք, որ Հայաստանի, Արցախի անվտանգության խնդիրը ոչ միայն հայաստանցիների, այլև 8 միլիոնանոց հայկական սփյուռքի բնակիչների խնդիրն է, որոնք պատրաստ են վտանգի դեպքում մեկ մարդու նման զինվորագրվելու Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովմանը: Բացառված չէ, որ այդ քայլերով միգուցե կարող էինք կանխել 4-օրյա պատերազմը, խուսափել մարդկային զոհերից:

Մենք հաճախ ենք պարտվում ինֆորմացիոն պատերազմում, իսկ շատ հարցերում ուղակի ուշանում ենք: Ապրիլյան պատերազմից ուղիղ մեկ ամիս հետո Ադրբեջանի իշխանությունները հրավիրեցից Աշխարհի ադրբեջանցիների 4-րդ համագումարը և քննարկեցին իրենց իսկ կողմից հրահարված պատերազմի արդյունքները: Բոլոր մեղքերը, այդ թվում նաև 4-օրյա պատերազմը, բարդեցին Հայաստանի և Արցախի վրա: Ավելին, համագումարը նույն բովանդակությամբ հայտարարություն ընդունեց՝ ողղված աշխարհի բոլոր պետությունների դեկլարաներին, պարլամենտներին, միջազգային բոլոր կազմակերպություններին:

Կարծում եմ, որ այստեղ էլ մենք ուշացանք: Բայց ինչպես ասում են, լավ է ուշ, քան երբեք: Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և “Հանուն ազգային միասնության շարժման” անունից առաջարկում եմ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին, հրավիրել Հայաստանի, Արցախի և հայկական սփյուռքի ներկայացուցիչների համահայկական համաժողով և քննարկել մեր ազգային անվտանգության հետ առնչվող արդիական հարցեր: Միաժամանակ գտնում եմ, որ անհրաժեշտ է ստեղծել համահայկական համագործակցությունը համակարգող մարմին՝ ՀՀ նախագահի գլխավորությամբ: Հենց այդ մարմինն էլ կարող է ձևավորել համահայկական կենսական շահերի պաշտպանության ճկուն համակարգ: Այդ մարմնի ձևաչափը կարող է որոշել Հայաստանի իշխանությունը:

Համազգային միասնության շարժման համատեքստում մենք կարևոր տեղ պետք է հատկացնենք **լեզրվամշակութային միասնության ապահովման հարցերին**: Համաշխարհային հայկական կոնգրեսը և Ռուսաստանի հայերի միությունը մեր ժողովրդի լեզրվամշակութային միասնության ապահովման գործում արդեն ձեռք են բերել լուրջ փորձ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայոց լեզուն հայապահպանության գլխավոր զենքն է, մեր ազգային գոյության հիմնասյունը, արդեն 10 տարի է ՀՀ Սփյուռքի նախարարության

հետ միասին կազմակերպում ենք հայապահպանության մրցանակաբաշխություն՝ սփյուռքի կրթօջախների, համայնքների, ընտանիքների միջև, որն արդեն շոշափելի արդյունք է տալիս:

Հայաստանի, համայն հայության նյութական և բարոյական բարգավաճման, նոր հարյուրամյակի մարտահրավերներին դիմակայելու համար վճռորոշ նշանակություն ունեն գիտությունն ու մշակույթը: Հայաստանի նման երկրի համար մտավոր սեփականությունը կարող է դառնալ հզորության, հարստության աղբյուր և համաշխարհային ճանաչում բերել նրան:

Ելնելով այդ ամենից սկսած 2006 թվականից Համաշխարհային հայկական կոնգրեսն ու Ռուսաստանի հայերի միությունը, ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ, ՀՀ Կրթության և գիտության, Մշակույթի նախարարությունների համագործակցությամբ, կազմակերպում են Լավագույն գիտական և ստեղծագործական աշխատանքների համահայկական մրցանակաբաշխություն, որին մասնակցում են ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան և ստեղծագործական միությունները:

Մրցանակաբաշխության նպատակն է նպաստել Հայաստանի և սփյուռքի գիտական և ստեղծագործական մտավորականության գործունեության ակտիվացմանը, աջակցել հայության մտավոր կյանքի աշխուժացմանը:

“Մրցանակաբաշխություն-2016”-ը անց է կացվում նոր շարժման շրջանակներում, “Համազգային միասնությունը հավաքական ուժի և հզորության գրավական” նշանաբանով: Մրցանակաբաշխությունը նվիրվում է Հայաստանի անկախության 25-ամյա հոբելյանին:

Հարգելի հայրենակիցներ

Ընդամենը մի քանի ամիս է անցել “Հանուն համազգային միասնության շարժման” նախաձեռնումից, բայց արդեն կարելի է ասել, որ ընդլայնվել և ընդլայնվում է նրա գործունեության աշխարհագրությունը: Մարդիկ անտարբերությամբ չեն նայում այդ կազմակերպության ծավալած գործունեությանը, փորձում են հավատալ, որ նրա միջոցով կարելի է շատ բան փոխել մեր երկրում, համախմբել հայությանը համազգային շահերի շուրջ: Մնում է բարի երթ ցանկանալ մեր շարժմանը, իսկ նրա մասնակիցներին ու համախոհներին՝ արդյունավետ գործունեություն:

Շնորհակալություն ուշադրության համար: